ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2013- 14.10/618
14.10.2013 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վահրամ Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան

2008թ. Մարտի 1-ին, 10 զոհերի մահվան հանգամանքները պարզելու ուղղությամբ դեռևս շարունակվում է հարուցված քրեական գործի նախաքննությունը, սակայն դեռևս գործով բացահայտումներ չկան:

ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը բազմիցս հայտարարություններ է տարածել, որով ակնկալելով հասարակության աջակցությունը, խնդրել է նրանց, ովքեր տեղեկություններ կարող են տրամադրել կատարված դեպքերի վերաբերյալ, որոնք կարող են բացահայտել 10 զոհերի մահվան հանգամանքները կարող են դիմել ՀՀ Հատուկ քննչական ծառայություն: (Հայտարարություններից մեկը տես[1]):

Ես՝ Արթուր Ալբերտի Սաքունցս հանդիսանալով իրավապաշտպան հասարակական կազմակերպության ղեկավար, որի հիմնական խնդիրներն են մարդու իրավունքների պաշտպանությունը ցանկացած ոտնձգությունից, շահագրգռված եմ 2008թ. մարտի 1-ին կատարված հանցագործությունները՝ մասնավորապես 10 զոհերի մահվան հանգամանքները բացահայտելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու գործում:

Սույն գործի քննությանն աջակցելու համար ցանկանում եմ ներկայացնել առաջարկություններ, որոնց բացահայտումը կարող է բացահայտել նաև կատարված հանցագործությունը:

Այսպես.

1. հարցաքննության կանչել և հարցաքննել այդ ժամանակ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, այդ ժամանակ վարչապետ Սերժ Սարգսյանին, նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանին, նախկին պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանին և տեղակալներ՝ Միքայել Գրիգորյանին և Գ. Մելքոնյանին, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Սեյրան Օհանյանին, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության նախկին և ներկայիս պետ Գորիկ

[1] http://www.investigatory.am/am/News/item/105/

Հակոբյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի հրամանատարին և նրա տեղակալներին հետևյալ հարցերի պարզաբանման շուրջ.

- ինչ բովանդակությամբ հրահանգներ, ցուցումներ է տվել Ռոբերտ Քոչարյանը 2008թ փետրվարի 24-ից մինչև 2008թ. մարտի 10-ն ընկած ժամանակաշրջանում նշված անձանցից յուրաքանչյուրին, երբ է տվել, ինչ հիմնավորմամբ և ինչ նպատակներով,

- ինչ բովանդակությամբ հրահանգներ, ցուցումներ են ստացել Ռոբերտ Քոչարյանից նշված պաշտոնատար անձինք 2008թ փետրվարի 24-ից մինչև 2008թ. մարտի 10-ը ժամանակահատվածում, երբ են ստացել, ինչ հիմնավորմամբ և ինչ նպատակներով:

2. Հարցաքննության կանչել և հարցաքննել 2008թ. մարտի 1-ի փաստահավաք խմբի անդամներ Ս. Սաֆարյանի և Ա. Քոչարյանի կողմից 2009թ. օգոստսի 24-ին հրապարակված 2008-ի մարտի 1-ի իշխանության կազմակերպած և իրագործած գործողության նախապատրաստական դրվագներից մեկի վերաբերյալ զեկույցում[2] նշված անձանց՝ Գագիկ Ծառուկյանին, Վաչիկ Ղազարյանին, Սուրիկ Խաչատրյանին, Գագիկ Բեգլարյանին, Լևոն Սարգսյանին, Հովիկ Աբրահամյանին, Սամվել Ալեքսանյանին, Առաքել Մովսիսյանին, Միհեր Սեդրակյանին ինչպես նաև ցուցակումում չընդգրկված Ռուբեն Հայրապետյանին, որոնց թիկնապահներին և թիկնազորերին են հատկացվել զինվորական համազգեստներ, պարզելու համար հետևյալ հարցերը.

-ումից, երբ, ինչ բովանդակությամբ հրահանգներ են ստացել և ինչ նպատակով.

3. Պարզել, վերը նշված պաշտոնատար և ոչ պաշտոնատար անձինք, նրանց թիկնապահները նշված ժամանակահատվածում որտեղ են գտնվել, ինչ նպատակով և ինչ գործողություններ են կատարել: 2008թ. փետրվարի 24-ից մինչև 2008թ. մարտի 10-ն ընկած ժամանակահատվածում, և հատկապես 2008թ. մարտի 1-ին, որ թիկնապահական խմբերին, որ պետական կառույցների ուժեղացված պահպանության հրահանգ է տրվել, և ինչ հրահանգներ են տրված եղել, ինչ գործողությունների են ուղղված եղել և որ դեպքերում կատարելու նպատակով:

Ուստի ելնելով վերոգրյալից դիմում եմ Ձեզ, վերը նշված հարցերի շուրջ քննություն կատարելու և կատարված գործողությունների վերաբերյալ դիմումատուիս տեղեկացնելու հարցով:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am

[2] http://www.1in.am/arm/armenia_politics_164633.html